ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

22.11.2019թ. ԿՆՔՎԱԾ N «ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-7» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «27» «11» 2019թ.

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ, ի դեմս տնօրեն Մ.Ս.Բիշարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Բ.Թադևոսյանի որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից,երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 22.11.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-7 գնման պայմանագրի (Այսուհետև՝ Պայմանագիր) 8.15-րդ կետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 18-րդ կետը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում վերոհիշյալ որոշման 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին N «ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-7» գնման պայմանագրի շրջանակներում հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց (վճարման ժամանակացույց) համաձայն կից հավելվածի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է N «ԳՀԱՊՁԲ-15/2-2019-2-ԴԲԳԳԿ-7» գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2Ապրանքների մատակարարումն իրականացվելու է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ միանվագ մինչև 15.12.2019թ.:

2.3Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը, մնում են անփոփոխ:

2.4Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ | «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ |
| Հասցե ՀՀ, ք. Երևան, Մ.Հերացի 5/1 | Հասցե՝ ք.Երևան, Արզումանյան 32-10 |
| Գանձապետարան | Բանկ՝ Էյչ-Էս-Բի-Սի բանկ |
| h/h 900018001975 | Հ/Հ 002182558001 |
| ՀՎՀՀ - 00405431 | ՀՎՀՀ01210095 |
| Տնօրեն Մ.Ս.Բիշարյան | Տնօրեն Բ.Թադևոսյան |
| ------------------------ /ստորագրություն/ Կ.Տ | ------------------------ /ստորագրություն/ Կ.Տ |